գին, որու հմտութեանցը դեռ շատ տարիներ կարօտ էինք։

Նոր Դար․ Թ․ 1914․ Դեկտեմբեր 13

## ՄԵՔԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԳԻՒՏ

Բերկրութեամբ սրտի կը հրատարակենք հետեւեալ նամակը, զոր Մամուլ օրագրին մէջ հրատարակուած տեսանք։

Պարոն․

Գիտութեանց և արհեստից յառաջադիմութեան բարեկամի մը կը փութամ աւետել՝ թէ դարէ մի ի վեր ինքնաշարժ մեքենայն հնարելու համար՝ ես ալ մեծ գումարներ և կեանք սպառող գիտուններու ըրած ջանից ապարդիւն ելնելէն չը յուսահատելով աշխատեցայ, և վերջապէս ոչ թէ ինքնաշարժ մեքենայն՝ որ բոլորովին խելքի դէմ է, այլ երկու հակառակ տարրոց, այսինքն ջրոյ և օդոյ, որ ամեն տեղ կը գտնուի նախախնամութեան շնորհիւ, մէկզմէկ վանել տալու ընկըզբամի զօրութիւն մը գտայ՝ որ մեքենայն մըշտնջենաւոր կերպով կը դարձնէ առանց շոգիի առանց ածխոյ առանց բուռն հոսանաց։ Տասը տարիէն աւելի կ'ըլլայ որ այս սկզբան վրայ համոզուած էի, և կ'ուզէի գտած զօրութիւնս մեքենայի մը վրայ փորձել․ շատ աշխատեցայ և իմ այս անձուկ վիճակիս մէջ շատ գումարներ վատնեցի բայց վերջապէս յաղթեցի։

Այս նորագիւտ մեքենայն ուզած տեղերնիս կըրնանք զետեղել․ և իրեն զօրութիւնով կրնանք ամեն տեսակ ֆաբրիքներու օգտակար ըլլալ։

Այս գիւտս կը փութամ Կայսերական կառավարութեան վերին ատենին հաղորդել․ ուստի կը խնդրեմ՝ որ ներփակեալ հետագրիս բարեհաճիք նորին բարձրութեան Օսմանեան Վ․ եհ․ Կայսեր Փոխարքային տալ, որ դէօ զի գործիս ար․ օնատէլըն ըլլալու իրաւունքն ունենամ։

Աստուծով քիչ օրէն մեքենայս մէկ փոքրիկ Մօտէլը պիտի ներկայացնեմ՝ Կայսերական կառավարութեան հասարակաց կրթութեան Պաշտօնատունը որոյ միջոցաւ նա և բովանդակ Եւրոպիոյ։

Այս աշխատութենէն իմ վայելելիք պատիւն այժմէն Հայ ազգին կը նուիրեմ, որոյ անհամենրէն յետինն եմ։ Իսկ ապագային ձեզ բերելիք շահուս մէջէն ալ մաս մը պիտի տամ Հայ ընտանեաց աղքատ զաւակաց կրթութեան՝ որոց եղբայրն եմ։

ՍՏԵՓԱՆ ՋԱՓԱՐԵԱՆ

[illegible]

## ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ՀԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ․

Անցեալներս ծանուցած էինք թէ Մարսիլիա նստող քանի մը հայ վաճառականք Արամեան (Արմէնիէն) անուամբ շոգենաւուց ընկերութիւն մը կազմեր են, Մարսիլիայէն Կ. Պոլիս և Բօթի բանեցնելու համար։

Այս անգամ բերկրութեամբ կը կարդանք Մարսիլիայի Գաղղիական լրագրաց մէջ, թէ յիշեալ ընկերութեան առաջին շոգենաւը՝ Բօլատին անուն՝ հինգշաբթի օրը Մարսիլիայէն ճանբայ ելեր է Կ Պոլիս գալու և անկէց ալ Բօթի երթալու համար։

Առ այժմ ընկերութիւնն երկու շոգենաւ ունի, որոց երկրորդին անունն է Արարատ։ Այս երկու շոգենաւներն ամեն 15 օրն անգամ մը Մարսիլիայէն ու Բօթիէն պիտի մեկնին ճանապարհորդ և ապրանք առնլով։

Այսպիսի կենցաղօգուտ ընկերութեան մը, որ Հայ անուան պատիւ կը բերէ, ազգասիրական պարտք մը կը համարինք անխափան յաջողութիւն ու յառաջդիմութիւն մաղթել։

Մասիս.

Մեր գիտցած տեղեկութիւնը եւս այս է, որ արդէն նոյն ընկերութեան առաջին շոգենաւը ի Բաթի հասած եւ վերադարձած է։ Երկու շոգենաւուց միոյն անունն է Հայաստան եւ միւսոյն՝ Արարատ։

Առ այժմ յաջողութիւն բարեմաղթելով՝ այս առթիւ մեր խօսելիքը ուրիշ միջոցի կթողումք։